# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Արգավանդ համայնքի
2016 թ. կիսամյակային հաշվետվության ժողովից
Կայացած 16.12.2016 թվականին ժամը $14^{00}$ ին
նախագահությամբ Ա.Աղաջանյանի
քարտուղարությամբ Ա.Սարգսյանի

Ժողովին ներկա էր Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի մշակույթի և սպորտի վարչության բաժնի պետ Ա Թովմասյանը:
Լսեցին Արգավանդ համայնքի ղեկավար Ա. Աղաջանյանի զեկույցը 2016թ. երկրորդ կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվության մասին:
Ժողովին մասնակցում էին նաև Արգավանդ համայնքի ավագանու հինգ անդամներ, համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ, համայնքի 70 /յոթանասուն/ անդամներ:
Համայնքի ղեկավարը ներկայացրեց հետևյալ աշխատանքները որոնք կատարվել են 2016 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում.

1.Ավագանու նիստ
2.Նոր ընտրված համայնքապետի լիազորությունների ստանձնում
3.2016 թվականի հավաքագրված հողի հարկ և գույքահարկ

Ժողովի նախագահ Ա.Աղաջանյան
Քարտուղար Ա.Սարգսյան

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Արգավանդ համայնքի 2016թ. երկրորդ կիսամյակի կատարած աշխատանքների:

Երկրորդ կիսամյակում հրավիրվել է ավագանու 5 նիստ, առաջին նիստով փոփոխություն է կատարվել 2016թ. բյուջեում:

Դրամական օգնություն է ցուցաբերվել համայնքի 47 անապահով բնակիչներին, որի համար տրամադրվել է 350000/երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Համայնքի ղեկավարին թույլատրվել է կազմակերպել համայնքի սեփականության հողերի վարձակալման մրցույթ:

2-րդ նիստով որոշվել է համայնքի ղեկավարի լիազորությունները ժամանակավոր դադարեցնելու վերաբերյալ հրաժարականը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին: Դրամական օգնություն է ցուցաբերվել համայնքի 3 /երեք/ անապահով բնակիչներին, որի համար տրամադրվել է 250 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

3-րդ նիստով հաստատվել է նոր ընտրված ավագանու լիազորությունները:

Դադարեցվել է մանկապարտեզի աշխատանքները՝ շենքային վատ պայմաններից ելնելով որոշում է կայացվել համայնքի կորուստ ունեցող բնակչի անդամներին տրամադրել սոցիալական օգնություն 60000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ չափով, հաստատվել է համայնքի ապարատի աշխատակիցների հաստիքացուցակը և դրույքաչափերը:

Ավագանու որոշմամբ հաստատվել է 2017 թվականի տուրքերի և վճարների դրույքաչափերը, հաստատվել է 2017 թվականի համայնքի բյուջեն, որոշում է կայացվել համայնքում ծնված յուրաքանչյուր երեխային տրամադրել 30000/երեսուն հազար/ՀՀ դր. դրամական աջակցություն:

Նոյեմբեր ամսին կատարվել է շաբաթօրյակ, առաջարկվել է համայնքի բնակիչներին մաքրել իրենց հարազատների գերեզմանոցի տարածքը:

Հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման, խնամակալության և հոգաբարձուների հանձնաժողովների կազմը:

Համայնքի գյուղամիջյան ճանապարհները անձրևների ժամանակ լինում են անանցանելի, այս վիճակը մեղմացնելու համար կատարվել է ավազապատում և հարթեցում: